2023, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (640)

Էջմիածնի Կաթողիկոսարան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը

Հոկտեմբերի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, սկսվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով: Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Այնուհետև Գերագույն հոգևոր խորհրդի հոգևորական և աշխարհական անդամներին իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցելով Սուրբ Հոգու առաջնորդությունը ժողովի բարեհաջող և արդյունավետ ընթացքի համար: Քառօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին հանրապետության առջև ծառացած հետպատերազմյա մարտահրավերներին և Արցախից բռնի տեղահանված հայորդիների հիմնախնդիրներին, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանմանը, Եկեղեցու հոգևոր, կրթական ու սոցիալական առաքելությանն առնչված հարցեր:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հոկտեմբերի 18-ին **Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում 2022 թ. ՀՀ պետական մրցանակի դափնեկրին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ պետական մրցանակի արժանացած «ԱԴՈԲԵ» (Adobe) ընկերության նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն Շանտանու Նարայենին՝ ուղեկցությամբ «Սինոփսիս Արմենիա» ընկերության նախագահ Երվանդ Զորյանի և գործադիր տնօրեն Հովիկ Մուսայելյանի:

Շնորհավորելով ՀՀ պետական մրցանակին արժանանալու առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց պարոն Շանտանու Նարայենի ներդրումը ՏՏ ոլորտում և կարևոր նկատեց, որ վերջինիս մտքի արգասիքները նպաստ են մարդկային կյանքի առաջընթացին ու բարօրությանը, խաղաղությանն ու արդարությանը:

Իր խոսքում Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին իր հոգևոր առաքելությանը զուգահեռ եղել է նաև հայ մշակույթի և գիտական մտքի կերտողն ու արարողը՝ հանդիսանալով հայի ինքնության պաշտպանը և հարատևության երաշխավորը:

Պարոն Շանտանու Նարայենը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով, որ մեծ պատիվ է լինել հայ ժողովրդի հոգևոր կենտրոնում:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան Արցախից բռնի տեղահանված հայորդիների առջև ծառացած մարտահրավերներին, Արցախի հոգևոր, մշակութային ժառանգության պահպանման և Հայաստանի անվտանգային խնդիրներին: Կարևորվեց մարդկության առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտի նորարական ձեռքբերումները:

Հոկտեմբերի 19-ին **Հունգարիայի վարչապետի աշխատակազմի փոխնախարարի գլխավորած պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի վարչապետի աշխատակազմի փոխնախարար Միկլոշ Փանիի գլխավորած պատվիրակությանը:

Նորին Սրբությունը, անդրադառնալով հայ-հունգարական հարաբերությունների վերականգնմանը, իր գնահատանքը հայտնեց Հունգարիայի կառավարությանը Մերձավոր Արևելքի երկրներում քրիստոնեական համայնքներին, Արցախից բռնի տեղահանված հայությանը ցուցաբերած աջակցության և 2021 թ. հինգ հայ ռազմագերիների հայրենադարձման հարցում ներդրած միջնորդական ջանքերի համար:

Իր խոսքում Հայոց Հովվապետը մտահոգությամբ անդրադարձ կատարեց Ադրբեջանի՝ Հայաստանի ինքնիշխան տարածքների բռնազավթմանը և շարունակական ոտնձգություններին, հայրենազրկված արցախահայության առջև ծառացած մարտահրավերներին, Արցախի հոգևոր, մշակութային ժառանգության պահպանման և գերիների վերադարձման խնդիրներին՝ ընդգծելով, որ նաև միջազգային հանրության ոչ համարժեք արձագանքի հետևանքով Ադրբեջանն անարգել իրագործեց իր ոճրագործ և ցեղասպան քաղաքականությունը: ➥ էջ 2

Հունգարիայի վարչապետի աշխատակազմի փոխնախարարի գլխավորած պատվիրակությանը

➥ էջ 1

Այս առնչությամբ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ միջազգային հանրությունը և Հունգարիան ևս հետևողական ու վճռական քայլեր կգործադրեն՝ ի նպաստ արցախահայության իրավունքների պաշտպանության, ինչպես և ժողովուրդների կյանքում նման արհավիրքների կանխման: Հանդիպմանը Նորին Սրբությունը նշեց, որ Հայոց Եկեղեցին ըստ ամենայնի փորձում է իր օգտակարությունը բերել կորուստների ու սոցիալական ծանր կացության մեջ հայտնված արցախահայությանը և հնարավորության սահմաններում անհրաժեշտ հոգածությունը ցուցաբերում նրանց կեցության ու կարիքների բավարարման հարցում:

Իր հերթին փոխնախարար Միկլոշ Փանին, անդրադառնալով հայ-հունգարական միջպետական կապերի սերտացմանը, Հայոց Հայրապետին հավաստիացրեց, որ Հունգարիայի իշխանությունները շարունակելու են իրենց աջակցությունը ցուցաբերել արցախահայությանը և միջնորդական ջանքեր գործադրել հայ գերիների վերադարձման ուղղությամբ:

Հոկտեմբերի 20-ին

Հունգարիայի «Հալածյալ քրիստոնյաների օգնության և հունգարական աջակցության ծրագրի» պետքարտուղարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի «Հալածյալ քրիստոնյաների օգնության և հունգարական աջակցության ծրագրի» պետքարտուղար Տրիստան Ազբեյին:

Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ-ում Հունգարիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Աննա Մարիա Շիկոն:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց այս դժվարին օրերին Հայաստանին և հայրենազրկված արցախահայերին ցուցաբերվող աջակցության և ի մասնավորի հայ ռազմագերիների վերադարձման ուղղությամբ գործադրվող միջնորդական ջանքերի համար:

Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց Արցախի հոգևոր, մշակութային ժառանգության պահպանման, բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանության և Հայաստանի անվտանգային խնդիրներին:

Նորին Սրբությունը նաև իր գոհունակությունն արտահայտեց Մերձավոր Արևելքի երկրների քրիստոնեական համայնքներին Հունգարիայից ցուցաբերվող զորակցության առնչությամբ:

Իր հերթին պրն. Տրիստան Ազբեյը Նորին Սրբությանը տեղեկացրեց Մերձավոր Արևելքի երկրների քրիստոնեական համայնքների աջակցության ծրագրերի, ինչպես և 2021 թ. հայ ռազմագերիների վերադարձման գործում իր անմիջական ներգրավվածության մասին:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին Հայոց Եկեղեցու և Հունգարիայի իշխանությունների միջև հումանիտար ոլորտում փոխգործակցության հեռանկարների վերաբերյալ:

ՀՀ-ում Բելգիայի թագավորության նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բելգիայի Թագավորության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Էրիկ Դե Մույնքին:

Նորին Սրբությունը, պաշտոնի ստանձնման առիթով շնորհավորելով դեսպանին, մաղթեց արդյունավետ առաքելություն՝ ի շահ հայ-բելգիական բարեկամական կապերի զարգացման: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ նորանշանակ դեսպանն իր ներդրումը կունենա Հայաստանի և Բելգիայի միջև հարաբերությունների առավել ամրապնդման և արդյունավորման գործում: Այս առնչությամբ Հայոց Հովվապետը գոհունակությամբ ընդգծեց նաև Բելգիայի հայ համայնքի ներդրումը հայ-բելգիական հարաբերությունների սերտացման գործում: Հանդիպմանը Հայոց Հայրապետը Բելգիայի Թագավորությանն իր երախտագիտությունը հայտնեց Բելգիայի խորհրդարանի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունման, արցախյան հակամարտության ընթացքում Արցախի ժողովրդի անվտանգությանն ու իրավունքների պաշտպանությանն ի նպաստ որդեգրած դիրքորոշումների, ադրբեջանական ագրեսիան դատապարտող հայտարարությունների և դժվարին այս ժամանակներում Հայաստանին ու հայ ժողովրդին ցուցաբերած զորակցության համար:

Անդրադառնալով մեր երկրի և ժողովրդի առջև ծառաց անվտանգային և գոյաբանական հարցերին՝ Նորին Սրբությունը կարևորեց միջազգային հանրության, ինչպես և Բելգիայի Թագավորության ազդու միջոցների գործադրումը:

Բելգիայի նորանշանակ դեսպան Էրիկ Դե Մույնքն իր խոսքում անդրադարձավ տարբեր ոլորտներում հայ-բելգիական համագործակցության խորացման ու զարգացման հեռանկարներին: Դեսպանը Նորին Սրբությանը տեղեկացրեց Բելգիայի Թագավորության պատրաստակամության մասին՝ աջակցելու Արցախից բռնի տեղահանված անձանց խնդիրների հաղթահարմանը: Դեսպանը նաև տեղեկություններ փոխանցեց Բելգիայում բուժում ստացող Ստեփանակերտի պայթյունից տուժած արցախցիների առողջական վիճակի մասին:

Հոկտեմբերի 24-ին

ՀՀ-ում Եգիպտոսի արտակարգ և լիազոր դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սերենադ Մուհամեդ Սոլիման Գամիլին:

Հանդիպմանը ներկա էր նաև Ղպտի Ուղղափառ Եկեղեցու սպասավոր հայր Իլարիոնը, որն իր աստվածաբանական կրթությունն է շարունակում Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում:

Նորին Սրբությունն ընդգծեց հայ-եգիպտական բարեկամական հարաբերությունների դարավոր պատմություն ունենալը՝ գնահատանքով անդրադառնալով, որ Եգիպտոսի իշխանությունները և ժողովուրդը հյուրընկալեցին Հայոց ցեղասպանությունից փրկված հայորդիներին՝ հնարավորություն ընձեռելով վերակազմակերպելու իրենց ազգային-հոգևոր կյանքը: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց Եգիպտոսի հայ համայնքի կարևոր դերակատարությանը հայ-եգիպտական կապերի զարգացման գործում: Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը մտահոգությամբ անդրադարձավ մեր երկրի ու Արցախից բռնի տեղահանված մեր զավակների առջև ծառացած մարտահրավերներին և ներկայացրեց Մայր Աթոռի՝ արցախահայերի կարիքների հոգածությանն ուղղված ծրագրերը:

Իր խոսքում Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց նաև, որ Հայ և Ղպտի քույր Եկեղեցիների միջև առկա են եղբայրական ջերմ հարաբերություններ և սերտ փոխգործակցություն:

Իր հերթին դեսպան Սերենադ Մուհամեդ Սոլիման Գամիլին Վեհափառ Հայրապետին փոխանցեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հոգևոր պետ Թավադրոս Բ Պատրիարքի ողջույններն ու բարեմաղթանքները: Եգիպտոսի դեսպանը Նորին Սրբությանը հավաստիացրեց, որ իր ջանքերը կներդնի հայ-եգիպտական հարաբերությունների էլ ավելի սերտացման և համագործակցության առավել ամրապնդման համար:

ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի ղեկավարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի ղեկավար Ասադի Մովահեդին:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջև տարբեր ոլորտներում արձանագրված սերտ համագործակցությանը: Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորապես խոսեց մշակույթի կենտրոնի հետ Մայր Աթոռի ամուր կապերի և համատեղ իրականացրած միջոցառումների մասին՝ այդ կապակցությամբ կարևորվելով մշակույթների և կրոնների միջև երկխոսության խթանումը, ինչը նպաստում է ժողովուրդների միջև համերաշխության և փոխգործակցության ձևավորմանը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև Մերձավոր Արևելքում տեղ գտնող ցավալի զարգացումներին՝ ի մասնավորի իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը: Վեհափառ Հայրապետը խոր մտահոգություն արտահայտեց պատերազմական գործողությունների և դրանց աղետալի, ողբերգական հետևանքների առնչությամբ: Նորին Սրբությունը նշեց, որ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների և ագրեսիայի հետևանքով հայ ժողովուրդը շարունակում է կրել պատերազմի արհավիրքների վիշտն ու ցավը: Հայոց Հայրապետը հայցեց Երկնավորից, որ շուտափույթ դադարեն մարդկային կյանքը վտանգող չարաղետ հակամարտությունները, և խաղաղություն հաստատվի ժողովուրդների կյանքում:

Իր հերթին պրն. Մոհավեդին Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նոր պաշտոնում երկու երկրների մշակութային կապերի ամրապնդմանն ուղղված իր ծրագրերը:

ԻԻՀ մշակութային կենտրոնի նորանշանակ ղեկավարն անդրադարձ կատարեց տարածաշրջանում տիրող իրավիճակով պայմանավորված մտահոգություններին՝ ժողովուրդների միջև փոխըմբռնման ու բարեկամության զորացման գործում կարևորելով միջկրոնական երկխոսությունը և մասնավորապես հոգևոր առաջնորդների առաքելությունը:

Կիպրոսի արքեպիսկոպոսի օգնականին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու պետ Տ. Գեորգիոս արք. Պապաքրիստոմուի օգնական Նեոպոլիսի Պորֆիրիոս եպիսկոպոսին:

Նորին Սրբությունը, ողջունելով սրբազան հոր այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, իր շնորհակալությունը հայտնեց Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցուն՝ այս դժվարին օրերին հայրենազրկված արցախահայությանը և Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար: ➥ էջ 3

Կիպրոսի արքեպիսկոպոսի օգնականին

➥ էջ 2

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ երկու բարեկամ ժողովուրդներն ունեն պատմական համանմանություններ և իրենց զորեղ հավատքով կարողացել են դիմագրավել բազմաթիվ փորձությունների ու դժվարությունների:

Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետն անդրադարձավ նաև բռնի տեղահանված արցախցիների առջև ծառացած մարտահրավերներին՝ հույս հայտնելով, որ առ Աստված հավատքով և Տիրոջ զորակցությամբ մեր ժողովուրդը կհաղթահարի Ադրբեջանի իրագործած ցեղասպանական գործողությունների ծանր հետևանքները:

Իր հերթին Պորֆիրիոս սրբազանը նշեց, որ իր այցը նպատակ ունի առողջապահական ոլորտում դեղորայքային օգնություն ցուցաբերել արցախահայությանը և Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու զորակցությունը հայտնել հայ ժողովրդին:

Վերջում Հայոց Հայրապետը, ի դեմս Պորֆիրիոս եպիսկոպոսի, իր եղբայրական սերն ու ողջույնը փոխանցեց Կիպրոսի Տ. Գեորգիոս արքեպիսկոպոսին:

Հոկտեմբերի 27-ին

Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտենբերգի երկրամասային կազմակերպության նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտենբերգի երկրամասային կազմակերպության նախագահ տիկին Բարբարա Բոշի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Գերմանական Կարմիր Խաչին այս դժվարին օրերին Հայաստանի և հայրենազրկված արցախահայության համար իրականացվող բարեգործական ու սոցիալական աջակցության ծրագրերի առնչությամբ: Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետն անդրադարձավ նաև Արցախից տեղահանված հայորդիներին Մայր Աթոռի կողմից ցուցաբերվող զորակցության ու աջակցության ծրագրերին:

Իր հերթին տիկին Բարբարա Բոշը, անդրադարձ կատարելով 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի գործունեությանը, խոսեց նաև «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի նախաձեռնած «Գթության խոհանոց» ծրագրի մասին: Տիկին Բարբարա Բոշը հավաստիացրեց Հայոց Հայրապետին, որ նախաձեռնված աջակցության ծրագրերը շարունակական են լինելու, հատկապես առաջնահերթ են նկատվելու բռնի տեղահանված արցախցիների կարիքները:

Վերջում Հայոց Հայրապետը, ի դեմս ներկաների, իր գնահատանքը փոխանցեց Գերմանիային և գերմանացի ժողովրդին Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար:

Հունգարիայի արտաքին գործերի և առևտրի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի արտաքին գործերի և առևտրի նախարար Պետեր Սիյարտոյին:

Հանդիպմանը ներկա էին նաև Հունգարիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Սմբատյանը, ՀՀ-ում Հունգարիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Աննա Մարիա Շիկոն և Հունգարիայի «Հալածյալ քրիստոնյաների օգնության և հունգարական աջակցության ծրագրի» պետքարտուղար Տրիստան Ազբեյը:

Նորին Սրբությունը, ողջունելով Հունգարիայի արտաքին գործերի և առևտրի նախարարի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, անդրադարձավ Հայաստանի և Հունգարիայի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնմանը: Հայոց Հայրապետը նշեց, որ նախարարի այցը Հայաստան որոշապես կնպաստի հայ-հունգարական կապերի և փոխգործակցության առավել սերտացմանն ու զարգացմանը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտահոգությամբ անդրադարձ կատարեց Ադրբեջանի ծավալապաշտական քաղաքականությանը և Հայաստանի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին՝ կարևոր նկատելով միջազգային հանրության հստակ ու հետևողական քայլերի իրականացման անհրաժեշտությունը՝ սանձելու Ադբեջանի զավթողական անզուսպ ձգտումները:

Հայոց Հայրապետը, ի դեմս նախարարի, իր գնահատանքը և շնորհակալությունը հայտնեց Հունգարիայի կառավարությանը 2021 թ. հայ հինգ ռազմագերիների հայրենադարձման, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներում քրիստոնեական համայնքներին, Հայ եկեղեցուն և այս դժվարին օրերին Հայաստանին ու հայրենազրկված արցախահայությանը ցուցաբերած աջակցության և զորակցության համար:

Իր խոսքում Հայոց Հովվապետն անդրադարձավ նաև գերիների վերադարձման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին:

Իր հերթին նախարար Պետեր Սիյարտոն արժևորեց Հայ Առաքելական Եկեղեցու դերը Հայաստանի և Հունգարիայի միջև դիվանագիտական կապերի վերականգնման գործում: Նախարարն ընդգծեց, որ հայ և հունգար ժողովուրդներն ունեն քրիստոնեական համընդհանուր արժեհամակարգ, ինչը կարևոր հիմք է հարաբերությունների առավել զորացման ու զարգացման գործում:

Հունգարիայի արտաքին գործերի և առևտրի նախարարն ընդգծեց նաև, որ Հունգարիան պատրաստ է տարբեր ծրագրեր իրականացնել տեղահանված արցախցիներին աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև հետևողական քայլեր ձեռնարկել Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:

Հոկտեմբերի 30-ին

ՀՀ-ում Ճապոնիայի՝ իր դիվանագիտական առաքելությունն ավարտող դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող՝ Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորիին:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց դեսպանին Հայաստանում իրականացրած առաքելության համար՝ բարձր գնահատելով վերջինիս ներդրած ջանքերն ի նպաստ երկու երկրների միջև սերտ փոխգործակցության և Մայր Աթոռի ու Ճապոնիայի մշակութային կառույցների միջև ձևավորված ջերմ հարաբերությունների:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաև արցախյան պատերազմի աղետալի հետևանքներին, հայրենազրկված արցախահայության առջև ծառացած մարտահրավերներին, գերիների վերադարձման և Արցախի հոգևոր-մշակութային արժեքների պահպանության խնդիրներին՝ վստահություն հայտնելով, որ հայ ժողովուրդն իր լավատեսական ոգով, զորեղ հավատքով, ինչպես և բարեկամ երկրների ու միջազգային հանրության գործուն աջակցությամբ կհաղթահարի առկա փորձությունները:

Հանդիպմանը Նորին Սրբությունը նաև իր շնորհակալությունը հայտնեց այս դժվարին իրավիճակում Ճապոնիայի՝ Հայաստանին ցուցաբերված զորակցության համար:

Իր հերթին դեսպան Ֆուկուշիման անդրադարձավ Հայաստանում իր ծառայության տարիների ընթացքում ստացած տպավորություններին՝ բարձր գնահատելով հայ ժողովրդի հյուրընկալությունը և հոգևոր-մշակութային ժառանգության յուրօրինակությունը:

Ճապոնիայի դեսպանը նաև իր ցավակցությունն ու զորակցությունը հայտնեց Նորին Սրբությանը արցախյան պատերազմի զոհերի ու տեղահանված արցախցիների առնչությամբ:

Հոկտեմբերի 30-ին

Ղազարավանի Սուրբ Նարեկ մենաստանի քույրերին և հարակից գյուղերի տարբեր դասարանների դպրոցական աշակերտների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արագածոտնի թեմի Ղազարավանի Սուրբ Նարեկ կանանց մենաստանի քույրերին և հարակից գյուղերի տարբեր դասարանների դպրոցական աշակերտների:

Հանդիպման սկզբում քույր Ազատուհի Խաչատրյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, տեղեկացրեց, որ դեռևս մեկ տարի առաջ թեմական առաջնորդ Տ. Մկրտիչ եպս. Պռոշյանի օրհնությամբ մենաստանում մեկնարկել են հոգևոր և հումանիտար առարկաների դասընթացներ Ղազարավանի և հարակից գյուղերի դպրոցական երեխաների համար:

Հայոց Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով ներկաներին, բարձր գնահատեց մենաստանի քույրերի իրականացրած հոգևոր-կրթական առաքելությունը դպրոցականներին հայեցի կրթելու և դաստիարակելու գործում: Վեհափառ Հայրապետը կարևորեց դպրոցականների հաղորդակցությունը եկեղեցու հետ, որով լավագույն հնարավորությունն է ընձեռվում նրանց ճանաչելու Հայ Եկեղեցին, ծանոթանալու հոգևոր կյանքին, Աստծու խոսքին ու Տիրոջ պատվիրաններին:

Նորին Սրբությունը հորդորեց աշակերտներին ուսանել ջերմեռանդորեն, ապրել Աստծու պատգամներով, բարիք գործել, սիրել միմյանց ու հայրենիքը, որպեսզի դառնան եկեղեցու ու ազգի արժանավոր զավակներ:

Վերջում Հայոց Հովվապետը պատասխանեց նաև դպրոցականների հարցերին, որոնք առնչվում էին հոգևոր կյանքին ու եկեղեցականի առաքելությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Մայր Աթոռում վերապատրաստման դասընթացներին մասնակցող եկեղեցականների հետ

Հոկտեմբերի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հանդիպեց երեքշաբաթյա վերապատրաստման դասընթացներն ավարտած քահանաներին, որոնք ժամանել էին Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ս. թ. հոկտեմբերի 10-ից մեկնարկած վերապատրաստման այս դասընթացները կրելու են պարբերական բնույթ: Ծրագիրը համակարգում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը: Մասնակից հոգևորականները հնարավորություն են ստանում թարմացնելու աստվածաբանական, ծիսական և պատմական իրենց գիտելիքները:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, իր օրհնությունը փոխանցելով հոգևոր հայրերին, հետաքրքրվեց վերապատրաստության ծրագրի ընթացքով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևորեց վերապատրաստման այս դասընթացները, որոնք հնարավորություն են ընձեռում տարբեր թեմերից ժամանած հոգևորականներին համախմբվելու, միասնաբար աղոթելու, իրենց հոգևոր փորձառությունը փոխանցելու, ինչպես նաև քննարկելու եկեղեցու և հասարակության առջև ծառացած արդի մարտահրավերները և դրանց հաղթահարմանն ուղիները:

Իր խոսքում Հայոց Հայրապետը հորդորեց եկեղեցականներին հոգեխնամ առաքելություն իրականացնել հայրենազրկված արցախցիների նկատմամբ և ամեն ջանք ներդնել նրանց օժանդակություն ցուցաբերելու համար: Նորին Սրբությունը քահանա հայրերին պատգամեց բարձր գիտակցությամբ և անվերապահ նվիրումով շարունակել իրենց անձնդիր ծառայությունը ազգին, հայրենիքին ու եկեղեցուն:

Մայր Աթոռում տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն

Հոկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ շնորհվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերստուգիչ հանձնախմբի անդամներ տիար Խաչատուր Մութաֆյանին և տիար Լյուդվիգ Հարոյանին, իսկ «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանին արժանացավ Կաթողիկոսական գրասենյակի պատասխանատու քարտուղար օրիորդ Անահիտ Անտոնյանը՝ ի գնահատություն Հայ Եկեղեցուն մատուցած երկարամյա, նվիրյալ և օգտաշատ ծառայությունների:

Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանն ընթերցեց Խաչատուր Մութաֆյանին ուղղված հայրապետական կոնդակը, որում մասնավորաբար ասված է. «Բարձրորեն գնահատում ենք Ձեր ազնվությունը, որ Դուք, Մեր հրավերին ընդառաջ, Ձեր հմտություններն ու կարողությունները շուրջ երկու տասնամյակ սիրով ի սպաս եք բերում նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը՝ որպես անդամ Մայր Աթոռի վերստուգիչ հանձնախմբի: Ձեր ծառայության ընթացքին Մենք ականատես ենք եղել աշխատանքի հանդեպ ունեցած Ձեր պահանջկոտ ու բծախնդիր վերաբերմունքին, որը հաջողություններ է ապահովել Մայր Աթոռի արդյունավոր գործունեության համար»:

Մայր Աթոռի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը ներկայացրեց տիար Լյուդվիգ Հարոյանին շնորհված հայրապետական կոնդակը, որում ի մասնավորի արձանագրված է. «Գոհունակությամբ ենք անդրադառնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին: Իբրև անդամ Մայր Աթոռի վերստուգիչ հանձնախմբի՝ Ձեր հարուստ փորձառությամբ ու կարողություններով Դուք գնահատարժան օգտակարություն եք բերում Սուրբ Էջմիածնին: Նախընթաց տասնամյակներին Մենք գոհունակությամբ ականատես ենք եղել Ձեր եկեղեցասիրությանն ու նախանձախնդիր և նվիրյալ գործունեությանը: Ի գնահատություն ազգօգուտ և եկեղեցանվեր Ձեր երկարամյա գործունեության, սիրով ընդառաջ Վերստուգիչ հանձնախմբի ատենապետ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալբագճյանի խնդրանքին, հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանը»:

Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ Տ. Վարդան եպս. Նավասարդյանն ընթերցեց օրիորդ Անահիտ Անտոնյանին ուղղված կոնդակը, որում նշված է. «Մեզ համար գոհունակություն է, որ մանկավարժական առաքելությանը զուգընթաց Դուք նաև պատասխանատու պաշտոններ ստանձնեցիք Արարատյան հայրապետական թեմում և ապա՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսական գրասենյակում՝ որդիական սիրով ու պատրաստակամությամբ Ձեր ձիրքերն ու մտավոր կարողություններն ի սպաս բերելով մեր Սուրբ Եկեղեցու առավել շինությանն ու պայծառությանը: Ամենօրյա Ձեր ծառայության մեջ Մենք գոհունակությամբ ականատես ենք պարտականությունների հանդեպ Ձեր բծախնդիր վերաբերմունքին, եռանդին ու ջանադրությանը»:

Կոնդակների ընթերցումից հետո Նորին Սրբությունը Հայ Եկեղեցու շքանշաններով զարդարեց մեծարյալների կուրծքը:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և Պահպանիչ աղոթքով:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եվրոպական երկրների հայրապետական պատվիրակները և առաջնորդները հանդիպում ունեցան ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի հետ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եվրոպական երկրների հայրապետական պատվիրակներ և առաջնորդներ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Տ. Տաթև եպս. Հակոբյանը, Տ. Սերովբե եպս. Իսախանյանը և Տ. Տիրան եպս. Պետրոսյանը ս. թ. հոկտեմբերի 25-ին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում հանդիպում ունեցան ԵԱՀԿ գլխավոր քարտուղար տիկին Հելգա Շմիդի հետ:

Հանդիպման ընթացքում սրբազան հայրերը տիկին Շմիդին փոխանցեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնություններն ու բարեմաղթանքները, ինչպես նաև ներկայացրին Հայ Եկեղեցու կողմից իրականացվող աշխատանքները՝ ուղղված տարածաշրջանային խաղաղությանը, Արցախից բռնի տեղահանված հայորդիների կարիքների հոգածությանն ու իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև՝ պատմամշակութային ու կրոնական ժառանգության պահպանությանը:

Սրբազան հայրերն ընդգծեցին, որ թեև Եվրախորհրդարանը դատապարտել է ադրբեջանական իշխանությունների կողմից Արցախում հայերի դեմ իրականացված սարսափելի հանցագործությունները, իսկ մի շարք երկրներ Ադրբեջանի ցեղասպանական գործողությունները դատապարտող բանաձևեր են ընդունել, սակայն Ադրբեջանն առ այսօր անտեսում է միջազգային հանրության կոչերն ու որոշումները:

Հանդիպմանը հոգևոր առաջնորդները նշեցին, որ ժամանակն է, որ ի պատասխան ադրբեջանական իշխանությունների որդեգրած ցեղասպանական քաղաքականության և արցախահայերի հանդեպ իրականացրած էթնիկ զտումների՝ միջազգային հանրությունը պատժամիջոցներ կիրառի Ադրբեջանի նկատմամբ՝ կանխելու նրա ռազմատենչ քաղաքականության հետագա դրսևորումները: Ադրբեջանի նման կեցվածքն առիթ պետք է հանդիսանա, որ Եվրամիությունը վերագնահատի վերջինիս հետ իր փոխհարաբերությունները, ձեռնարկի ռազմական հանցագործությունների մանրակրկիտ հետաքննության, ինչպես նաև միջազգային երաշխիքներ ստեղծի՝ ապահովելու տեղահանված արցախահայերի վերադարձն իրենց պատմական հայրենիք, ինչպես նաև նրանց անվտանգ կյանքն ու կենսագործունեությունը:

Տիկին Շմիդը վստահեցրեց, որ ԵԱՀԿ-ն և անձնապես ինքը կանեն ամեն հնարավորը՝ նպաստելու տարածաշրջանում հարատև ու արդար խաղաղության հաստատմանը, որի մեջ պետք է նկատի առնվեն նաև Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքն ու անվտանգ կյանքն իրենց բնօրրանում: Գլխավոր քարտուղարը նաև հավաստիացրեց, որ ԵԱՀԿ-ն շարունակելու է իր աջակցությունը բերել ի նպաստ տեղահանվածների հումանիտար և հոգեբանական կարիքների հոգածության:

Հանդիպման վերջում սրբազան հայրերը Հայ Եկեղեցու՝ Եվրոպայի բոլոր առաջնորդների անունից նամակ փոխանցեցին տիկին Շմիդին, որում ամփոփված էին այն հիմնական կետերը, որոնք քննարկման նյութ դարձան նաև հանդիպման ընթացքում:

«Գավիթ» հարթակի մասնակիցների հայտարարությունը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Գավիթ» հարթակի հանդիպում՝ «Հայաստան և Արցախ. գոյաբանական մարտահրավերներ և հաղթահարման ուղիներ» թեմայով:

Բազմակողմանի քննարկման առարկա դարձնելով հայրենիքի առջև ծառացած հիմնախնդիրներն ու սպառնալիքները, հայրենիքում և սփյուռքում բարձրաձայնվող մտահոգությունները՝ հարթակի մասնակիցները հանդես եկան հայտարարությամբ.

«Մենք՝ «Գավիթ» հարթակի մասնակիցներս՝ հոգևորականներ, հասարակական գործիչներ, մասնագիտական ու փորձագիտական հանրույթների ներկայացուցիչներ, «Հայաստան և Արցախ. գոյաբանական մարտահրավերներ և հաղթահարման ուղիներ» թեմայի շրջանակներում քննարկելով Հայրենիքի առջև ծառացած հիմնախնդիրները, խոր մտահոգությամբ արձանագրում ենք.

Ադրբեջանի կողմից տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սերմանվող հայատյացությունը, սանձազերծված պատերազմները, ցեղասպան գործողությունները և ագրեսիան հանգեցրել են Արցախի հայաթափմանը և Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների բռնազավթմանը:

Խիստ մտահոգիչ են առկա ծանր իրավիճակի հանդիման ՀՀ իշխանությունների անհամարժեք դիրքորոշումներն ու գործողությունները, ներազգային կյանքում տեղ գտնող թշնամանքի ու ատելության դրսևորումները:

Մեծապես գիտակցելով ներկա ծանր մարտահրավերների հաղթահարման գոյաբանական անհրաժեշտությունը՝ «Գավիթ» հարթակի մասնակիցներս հայտարարում ենք.

1. Ազգային կյանքում հառնած սպառնալիքները լուծումներ պետք է գտնեն բացառաբար Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների անձեռնմխելիության և Արցախի Հանրապետության ժողովրդի՝ հայրենի հողի վրա ազատ ու անկախ ապրելու իրավունքի շրջանակներում: Այս առումով կարևոր են բարեկամ ու դաշնակից երկրների հետ հավասարակշված հարաբերությունների զարգացմամբ, փոխվստահության մթնոլորտում փոխշահավետ գործակցությունը և ողջ միջազգային հանրության զորակցության ապահովումը:

➥ էջ 5

«Գավիթ» հարթակի մասնակիցների հայտարարությունը

➥ էջ 4

2. Արցախի բռնազավթմամբ և հայաթափմամբ Արցախյան հիմնախնդիրը չի լուծվել. արցախահայության ազատ կամարտահայտությամբ միջազգային հանրային իրավունքի համաձայն ստեղծված Արցախի Հանրապետությունը կա և պետք է լինի: Հնարավոր բոլոր ճանապարհներով, առկա ողջ գործիքակազմի կիրառմամբ պետք է ամրագրել Արցախի ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման, ազատ ինքնորոշման և հայրենի հողի վրա ինքնիշխանության հայեցակարգը:

3. Հարկ է զորավիգ լինել բռնի տեղահանված և ծանրագույն վիճակում գտնվող մեր եղբայրներին ու քույրերին և ըստ ամենայնի հոգալ նրանց օրախնդիր հոգևոր-բարոյական, իրավական, տնտեսական ու սոցիալական կարիքները՝ մեղմելու նրանց կրած ահռելի կորուստների հետևանքները և այս դժվարին շրջանում նպաստելու իրենց կյանքի կազմակերպմանը Հայաստանի Հանրապետությունում:

4. Բոլոր տեսակի բանակցային գործընթացներում և միջազգային ատյաններում հարկ է հետևողականորեն առաջ մղել առևանգված, գերեվարված և Բաքվում շինծու մեղադրանքներով ապօրինաբար պահվող զինծառայողների և քաղաքացիական անձանց, այդ թվում նաև՝ Արցախի Հանրապետության քաղաքական ղեկավարության ներկայացուցիչների անհապաղ ազատ արձակման պահանջը, ինչպես նաև անհայտ կորած բոլոր անձանց ճակատագիրը պարզելու անհրաժեշտությունը:

5. Բանակցություններում և միջազգային ատյաններում բարձրաձայնել Արցախի պատմամշակութային և հոգևոր ժառանգության պահպանման, սրբատեղիների գործածության իրավունքների և դեպի սրբավայրեր ուխտագնացությունների կազմակերպման խնդիրները, որոնք իրենց ամբողջական լուծումը կգտնեն արցախահայության հայրենադարձման, ինքնորոշման իրացված իրավունքների ճանաչման և Արցախի թեմի առաքելության լիարժեք վերականգնման միջոցով:

Մեր կոչն ենք ուղղում հայրենի և աշխարհասփյուռ մեր ժողովրդի լայն շրջանակներին, առաջին հերթին՝ ազգային, հասարակական, քաղաքական կազմակերպություններին, մշակույթի, գիտության ու կրթության գործիչներին՝ պատասխանատվություն ստանձնելու հայրենիքի և հայոց պետականության ապագայի նկատմամբ, համախմբվելու մեր երկրի, մեր ինքնության պահպանության ու մեր ապրելու իրավունքի պաշտպանության գաղափարական առանցքի շուրջ և համընդհանուր ջանքերով կասեցնելու շարունակվող պարտությունների ու ձախողումների կործանարար շղթան:

Թող Աստված անսասան պահի հայրենի մեր պետականությունը և օգնական ու պահապան լինի համայն մեր ժողովրդին այսօր և միշտ և հավիտյանս. Ամեն»:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական
համակարգի

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՅ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ Եկեղեցու գործունեությունը Կիլիկիայում 12-րդ դարի երկրորդ կեսին

Կիլիկիայի հայկական պետության և մասնավորապես Հայ Եկեղեցու պատմության մեջ առանձնահատուկ է 12-րդ դարի 70-ական թվականների առաջին կեսի՝ մեծ իշխանապետ Մլեհի կառավարման ժամանակաշրջանի եկեղեցական պատմության ուսումնասիրությունը: Այս պատմաշրջանում Կիլիկիայում հայկական իշխանությունը լուրջ քայլեր էր կատարում թագավորության հռչակման համար, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը երկարատև դեգերումներից հետո հաստատվել էր Կիլիկյան Հայաստանի սահմանագլխին՝ Հռոմկլա բերդաքաղաքում: Եվ բնական է, որ Հռոմկլայի կաթողիկոսարանի և Ռուբինյան իշխանապետության միջև առկա էին սերտ, ավելին՝ խնամիական կապեր:

Հայտնի իրողություն է, որ Մլեհը Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ յուրահատուկ անձնավորություն էր: Ի տարբերություն հայ մյուս իշխանների՝ նա քաղաքական այլ կողմնորոշում է ունեցել: Կաթոլիկների մշտական դավաճանությունից և հույների բացահայտ թշնամանքից դասեր քաղելով՝ նա դաշնակիցների հարցում կատարել է դիվանագիտական հեղաշրջում և դաշնակցել է Հալեպի սուլթան Նուր ալ-Դինի հետ (1146—1174), իսկ հետագայում՝ նաև տարածաշրջանի մահմեդական պետական այլ միավորների հետ, որը ոչ միանշանակորեն ընդունվեց, քանզի տարածաշրջանի թե՛ խաչակրաց պետությունները, թե՛ քրիստոնյա Արևմուտքը և թե՛ Բյուզանդական կայսրությունը Կիլիկիայի հայկական պետությունը դիտում էին որպես իրենց դաշնակից և վստահելի հենարան տարածաշրջանի իսլամական պետությունների դեմ պայքարում:

Այսպես՝ 1169 թ. Մլեհ Ռուբինյանը, լսելով եղբոր՝ Թորոս Բ-ի մահվան լուրը, Հալեպի սուլթան Նուր ալ-Դինից ստանում է օգնական ջոկատ, ներխուժում է Կիլիկիայի Ռուբինյան իշխանություն և խլում իշխանությունն իր եղբորորդուց՝ Ռուբենից, որը նախ տեղափոխվում է Անտիոք, ապա՝ Հռոմկլա, որտեղ էլ մեկ տարի անց վախճանվում է:

Մլեհի կառավարման սկզբնական շրջանում հայոց կաթողիկոսն էր Ներսես Շնորհալին: Ցավոք, հայոց իշխանապետի և կաթողիկոսի միջև եղած հարաբերությունների մասին շատ քիչ տեղեկություններ են հայտնի, թեև նրանք ունեցել են սերտ կապեր, որոնք նպաստել են պետական-քաղաքական կառավարման զարգացմանը:

Բնական է նաև, որ նշյալ ժամանակաշրջանում Մլեհ իշխանապետի և Հալեպի սուլթանության շահերից չէր բխում, որ Հայոց Եկեղեցին միավորվի բյուզանդականի հետ: Ինչ վերաբերում է Հռոմկլայի կաթողիկոսարանին, ապա պետք է նշել, որ այն միանգամայն անկախ կառույց էր, չէր մտնում Ռուբինյանների հայկական իշխանության տարածքի մեջ և չէր ենթարկվում նրանց:

Կաթողիկոս Ներսես Շնորհալու մահից հետո առաջ եկավ կաթողիկոսական թափուր աթոռի թեկնածուի ընտրության խնդիրը, որը կարծես թե առաջին հայացքից գրեթե լուծված էր: Խնդիրն այն էր,

Գրիգոր Տղա կաթողիկոս

որ Ներսես Շնորհալու մահվանից առաջ արդեն որոշվել էր, որ հայոց կաթողիկոսի պաշտոնին նրանից հետո հաջորդելու էր իր եղբոր՝ Վասիլի որդին՝ Գրիգոր Տղան, որը մեծացել և կրթություն էր ստացել կաթողիկոսարանում, եղել էր Շնորհալու օգնականը և տեղակալը, մասնակցել հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին, նաև փորձառու հոգևորականի համբավ ուներ: Պատմիչ Սմբատ Սպարապետը տեղեկացնում է հետևյալը. «Եւ գրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յաթոռ նորա զորդի եղբօրն իւր երիցագունի Վասլի զարքեպիսկոպոսն տէր Գրիգոր, մականուն Տղայ»: Նմանատիպ տեղեկության հանդիպում ենք նաև միջնադարյան մյուս պատմիչների երկերում: Ամեն պարագայում հայոց կաթողիկոսի ընտրության մասին ամենից շատ տեղեկություններ մեզ հաղորդում է Միքայել Ասորի պատմիչը, որի վկայությունները չափազանց կարևոր են վերը նշյալ խնդրի պարզաբանման համար:

Ըստ Միքայել Ասորու՝ կաթողիկոսի մահվան պահին Գրիգոր Տղան Հռոմկլայում չէր. նա հայրապետական հանձնարարականով գտնվում էր Կիլիկիայում, ուստի և Ներսես Շնորհալին ստիպված կաթողիկոսական մատանին հանձնում է իր ազգականներից Գրիգոր Ապիրատին. «Եւ աւագ եղբօր որդին չէր մերձ մահու հօրեղբօրն, և կրտսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ կաթողիկոս...»: Գրիգոր Ապիրատն էլ էր նույն՝ Պահլավունիների գերդաստանի ներկայացուցիչ: Նա էլ Ներսես Շնորհալի կաթողիկոսի մյուս եղբոր՝ Շահանի որդին էր:

Փաստորեն՝ Գրիգոր Տղայի բացակայության պայմաններում նոր կաթողիկոս է դառնում Գրիգոր Ապիրատը: Այս հանգամանքն առաջ է բերում հորեղբոր որդու՝ Գրիգոր Տղայի դժգոհությունը: Իսկ երբ Գրիգոր Տղան վերադառնում է կաթողիկոսանիստ Հռոմկլա, Գրիգոր Ապիրատը հրաժարվում է ընդունել նրան: Բնականաբար Գրիգոր Ապիրատի այս քայլը շատ ծանր իրավիճակի մեջ է գցում Գրիգոր Տղային, և նման պայմաններում վերջինս փորձում է քայլեր ձեռնարկել իր իրավունքները պաշտպանելու համար: Այդ մասին Միքայել Ասորին հետևյալն է նշում. «Եւ յորժամ լուաւ զայն աւագն. եկն ի կլայն կաթողիկոսութեան, և ոչ թողին ըզնա ի բերդն. և նա գնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Մլեհն. և Մլեհն էառ զնա և տարաւ առ Նորադինն, և նորին օգնութեամբ՝ եմոյծ զնա ի Հռոմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետութեան հօրեղբօրն՝ Գրիգոր անուն...»:

Իսկ ով էր այս ծանր պահին օգնելու Գրիգոր Տղային, եթե ոչ հայոց իշխանապետը: Եվ հավանաբար դա էր պատճառը, որ վերջինս անմիջապես դիմում է իր փեսային՝ Մլեհ իշխանապետին: Եվ միայն նրա վճռական միջամտության շնորհիվ հայրապետական գահն անցնում է Գրիգոր Դ Տղային: Սակայն հարց է առաջ գալիս, թե արդյոք հայոց իշխանապետն իրավասություն ունե՞ր միջամտելու հայոց կաթողիկոսի ընտրության գործընթացին: Հայտնի իրողություն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը կատարվում էր եպիսկոպոսաց ժողովի կողմից, և բացի այդ՝ Հռոմկլայի կաթողիկոսարանը հայ ժողովրդին միավորող եզակի կառույցներից էր և վեր էր բոլոր իշխանական տներից: Բայց եթե հավատալու լինենք Միքայել Ասորու խոսքերին, ապա պետք է մտածել, որ Գրիգոր Ապիրատը, օգտվելով այն իրավիճակից, որ Գրիգոր Դ Տղան Հռոմկլայում չէր, բազմել էր կաթողիկոսական գահին: Թեև Շնորհալին իրեն իրավահաջորդ էր հայտարարել Գրիգոր Տղային, սակայն հանգամանքների բերումով է կաթողիկոսը մատանին տվել Գրիգոր Ապիրատին: Եվ նման պարագայում միայն Մլեհն իր ռազմական *ուժով կարող էր հարցը լուծել, քանի որ, ինչպես գիտենք, Հռոմկլան բավական* հզոր և ամուր բերդաքաղաք էր: Բնականաբար Գրիգոր Տղան միայնակ չէր կարող օրինական ընթացքով կարգավորել այդ խնդիրը: Կիլիկիայի հայկական պետության ողջ պատմությունից հստակորեն երևում է, որ գրեթե միշտ էլ պետական կառավարման համակարգը, այդ թվում հայոց իշխանները, իսկ թագավորության հռչակումից հետո՝ նաև արքաները, թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի կերպով միջամտել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություններին, քանի որ դրանք ունեին չափազանց կարևոր նշանակություն ողջ հայության համար: Գրեթե միշտ էլ փորձ է արվել այդ պատասխանատու պաշտոնին բազմեցնել այնպիսի ցանկալի անձի, որի շնորհիվ պետության և Եկեղեցու հարաբերություններում վերջինս մնար աշխարհիկ իշխանության ազդեցության ոլորտում: Դա գիտակցում էր նաև Ռուբինյան իշխաններից Մլեհը: Հայոց իշխանապետն այդ մասին նախ տեղյակ է պահում Հալեպի տիրակալ Նուր ալ-Դինին և նրանից հավանություն ստանալով՝ անցնում է գործնական քայլերի. Մլեհ Ռուբինյանը գահընկեց է անում Գրիգոր Ապիրատին և կաթողիկոսական աթոռին բազմեցնում Գրիգոր Դ Տղային (1173—1193): Ուշագրավ է այն փաստը, որ հայոց իշխանապետը, լինելով բավական հզոր քաղաքական գործիչ, միայն Նուր ալ-Դինի համաձայնությունն ստանալուց հետո ձեռնամուխ եղավ այս կարևոր գործին: Խնդիրն այն է, որ հայոց իշխանապետն այդ ժամանակ էլ համարվում էր Հալեպի տիրակալի դաշնակիցը, և բացի այդ՝ հայտնի փաստ է, որ Հռոմկլայի կաթողիկոսարանի տարածքը գտնվում էր Հալեպի սուլթանության սահմաններում: Հավանաբար այդ պատճառով էլ Մլեհը ցանկացավ հավանություն ստանալ Նուր ալ-Դինից և դրանից հետո նոր միջամտել հայոց կաթողիկոսի ընտրության խնդրին:

Այսպիսով՝ կաթողիկոս Ներսես Շնորհալու մահից հետո հայրապետական թափուր գահի համար որոշակի պայքար են մղել Շնորհալու եղբայրների երկու որդիները՝ Գրիգոր Ապիրատը և Գրիգոր Տղան:

Հայտնի է, որ այս կաթողիկոսի 20-ամյա կառավարման ժամանակ շինարարական բավականին մեծ աշխատանքներ են իրականացվել: Բացի այդ՝ հենց Գրիգոր Դ Տղայի կողմից է եպիսկոպոս ձեռնադրվել Ներսես Լամբրոնացին, որը հետագայում դարձավ Կիլիկյան Հայաստանի ամենահայտնի հոգևորականներից մեկը և բավականին լուրջ գործունեություն ծավալեց նաև Կիլիկիայի հայկական թագավորության ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Ինչ վերաբերում է Գրիգոր Ապիրատին, ապա պետք է նշել, որ նա որոշ ժամանակ անց նշանակվում է Տարսոնի թեմի առաջնորդ՝ շարունակելով մնալ երկրի առավել աչքի ընկնող և ազդեցիկ եկեղեցականներից մեկը: Վերջինս երկար ժամանակ կառավարում է այդ թեմը, իսկ իր կյանքի վերջին տարիներին դառնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս (1194—1203)՝ կարևոր դերակատարում ունենալով 12-րդ դարի վերջի և 13-րդ դարի սկզբի հայ-բյուզանդական և հայ-հռոմեական եկեղեցաքաղաքական բանակցություններին: Բացի այդ՝ հենց Գրիգոր Ապիրատի ձեռամբ էլ հետագայում Լևոն Մեծագործը Տարսոն քաղաքում օծվում է որպես Կիլիկիայի հայոց թագավոր, որը կարևոր պատմական իրադարձություն էր թե՛ Կիլիկիայի և թե՛ ողջ հայության համար:

Դժբախտաբար, Մլեհ իշխանապետի կառավարման վերջին մեկուկես տարիներին Ռուբինյան իշխանապետի և Հռոմկլայի կաթողիկոսարանի հարաբերությունների մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում գրեթե տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ Հռոմկլայի կաթողիկոսարանը և անձամբ Գրիգոր Դ Տղան գործուն կերպով շարունակել են դեռևս Ներսես Շնորհալու կաթողիկոսության տարիներից որդեգրված քաղաքականությունը: Ինչ վերաբերում է անձամբ Մլեհ իշխանապետի և կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի հետագա հարաբերություններին, ապա պետք է նշել, որ ամենայն հավանականությամբ նրանց միջև էական խնդիրներ կամ տարաձայնություններ չեն ծագել, այլապես դրանք դժվար թե վրիպեին ժամանակի պատմիչների ուշադրությունից:

Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պ. գ. թ.

ՆԱԽԷ... ԱՆՄԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՍՏԳՅՈՒՏ....

Համաշխարհային ջրհեղեղը

Աստվածաշնչի առաջին գիրքը՝ Ծննդոցը, հակիրճ կերպով 6–8 գլուխներում ներկայացնում է համաշխարհային ջրհեղեղի եղելությունը, որի խորհուրդը մեղքի բազմացումն է և ի դեմս արդար Նոյի ու նրա ժառանգների՝ նոր մարդկության ձևավորումը:

Այսքան դրամատիկ մի իրադարձություն կարո՞ղ էր արդյոք հետքեր չթողնել աշխարհում, կարո՞ղ է ժամանակակից գիտությունը փոքրիշատե լույս սփռել և բավարար բացատրություններ մեզ ընձեռել: Թեև երկրաբանների պրպտումները որոշ դեպքում համոզիչ են, բայց անբավարար են մնում. այսպես բովանդակ եվրասիական մայր ցամաքը, ինչպես ձյան ծածկույթը, պատված է նստվածքային ապարներով, որոնք, ինչպես հայտնի է, միմիայն ջրային միջավայրում են գոյանում:

Ավելի ուշագրավ են հնէաբանության՝ պալեոնթոլոգիայի՝ մեռած կենդանիների մասին գիտության եզրակացությունները: Այսպես՝ հնէաբանության հիմնադիր ֆրանսիացի Կյուվիեն գտնում է, որ ընդերքում՝ «եղբայրական գերեզմաններում», հայտնաբերվող հսկայական դինոզավրների հետ թաղված ժամանակակից կաթնասունների, ձկների, սողունների միլիարդավոր քարացած նմուշները՝ քարացուկները, երկու բան են վկայում. նախ, որ նրանք ոչնչացել են միանգամից, և երկրորդ, որ քարացել են նստվածքային ապարների մեջ թաղվելուց, ինչը և բացատրվում է միայն տարերային աղետով՝ ջրհեղեղով: Այլապես անհասկանալի են միլիոնավոր կենդանիների քառասային և խառնիճաղանջ կուտակումներն ու անփուտ, չքայքայված լեշերի գոյության փաստը:

Ամեհի ջրհեղեղով պայմանավորված՝ երկիր մոլորակը փոխում է իր ուղեծիրը կամ թեքման անկյունն արեգակի շուրջ, որի արդյունքում շեղվում է արևի ճառագայթների անկման անկյունը, և դրանից կախված՝ նաև առանձին շրջանների կլիման: Այսպես՝ մի ակնթարթում սառչում են բևեռային շրջանները: Ցայսօր հավերժական սառածության մեջ հնէաբանները հայտնաբերում են հին կենդանիների և բույսերի լիովին պահպանված մնացորդներ՝ մամոնտներ, վագրեր, կանաչ տերևներով ու հասուն պտուղներով արմավենիներ և սալորենիներ, որոնք բոլորն էլ արևադարձային գոտու ֆլորայի ու ֆաունայի ներկայացուցիչներ են: Ապշեցուցիչ է մանավանդ Սիբիրում հայտնաբերված հիանալի պահպանված սառած մամոնտը՝ չմարսված կանաչ խոտը ստամոքսում և բերանում: Հավերժական սառածությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի ակնթարթում սառած ջրի և ցեխի զանգված՝ մի քանի հարյուր մետրից մինչև 1200 մետր խորությամբ, որը և, ըստ էության, նույն նստվածքային երկրաբանական շերտն է, բայց ոչ քարացած, այլ սառած:

Երկիր մոլորակի բևեռների և առհասարակ Երկրի առանցքի թեքության փոփոխության զարմանահրաշ և տարաբնույթ այլ փաստեր էլ կան: 17-րդ դարում Չինաստան միսիոներական առաքելությամբ այցելած ճիզվիտ Մարտին Մարտինեսը, մի քանի տարի ուսումնասիրելով լեզուն ու երկիրը, գրում է «Չինաստանի պատմությունը» աշխատությունը: Վկայակոչելով տեղացի հին մատենագիրներին՝ մանրամասն նկարագրում է, թե ինչ է տեղի ունեցել ջրհեղեղի ժամանակ. «....Երկնքի հենարանը փլվեց, երկիրը ցնցվեց մինչև իր հիմքերը: Երկինքը սկսեց թեքվել դեպի հյուսիս: Արևը, լուսինն ու աստղերը փոխեցին իրենց շարժման ուղղությունը: Տիեզերքի ողջ կարգը փոխվեց: Արեգակն ընկավ խավարման մեջ, և մոլորակները փոխեցին իրենց ուղին»:

Մեքսիկական հնադարյա «Չիմալպոպոկի կոդեքսում» կարդում ենք. «Երկինքը մոտեցավ երկրին, և մեկ օրում ամեն ինչ կործանվեց: Նույնիսկ լեռները ջրի տակ անցան...»:

Գվատեմալայի տարածքում բնակվող կիչե հնդկացիների սրբազան գրքում՝ «Պապոլ-Վուհում», կարդում ենք. «Աղետից հետո տիրեց սառնամանիքը, արևը չէր երևում»:

Մերօրյա գիտական կարծիքներից ուշագրավ է ամերիկացի երկրաբան Ջ. Բեյնի պնդումը, ըստ որի՝ շատ տարիներ առաջ հյուսիսային բևեռը գտնվել է Խաղաղ օվկիանոսում: Երկրաբաններից շատերը համոզված են, որ քարածխի հանքաշերտերը գոյացել են ջրհեղեղի ժամանակ ջրի երեսին լողացող ծառերի ու բույսերի կուտակումներից, որոնք թաղվել են հողի տակ:

Սակայն բանահյուսության տվյալներն ու փաստարկները խնդրո առարկայի վերաբերյալ ավելի համոզիչ են: Այսպես. աշխարհի բոլոր մայրցամաքներում՝ Եվրոպայից Ամերիկա, Ասիայից Աֆրիկա և Ավստրալիա, բնակություն հաստատած գրեթե բոլոր ժողովուրդների ավանդությունները պատմում են, թեև տեղական գունավորումներով ու աղճատված, ջրհեղեղի և մի ընտանիքի փրկության մասին, ինչը, անկասկած, սուրբգրային ջրհեղեղի և Աստծու միջամտությամբ դրանից փրկված Նոյի ու նրա գերդաստանի, այսինքն՝ մեր հեռավոր նախնիների մասին պահպանված հիշողության արձագանքն է: Այդ նույն «Պապոլ-Վուհում» կարդում ենք. «Եղավ մի մեծ ջրհեղեղ.... Երկրի երեսը խավարեց, և սկսեց տեղալ սև անձրև, զօրուգիշեր տեղատարափ էր.... Մարդիկ փախչում էին հուսահատ.... Նրանք փորձում էին պատսպարվել տների տանիքներում, որոնք փլվում էին ու նրանց շպրտում գետնին: Նրանք փորձում էին բարձրանալ կատարները, բայց ծառերից էլ էին շպրտվում ցած, մարդիկ փրկություն էին փնտրում այրերում ու քարանձավներում, և դրանք գերեզման էին դառնում նրանց համար: Այսպես ավարտվեց ոչնչացման դատապարտված մարդկային ցեղի կոտորածը»:

Ըստ Ամազոնիայի հնդկացիների ավանդության՝ ամեն ինչ սկսվեց որոտ ու դղրդոցով, ապա ամեն ինչ կորավ խավարի մեջ, և երկրի վրա սկսվեց հեղեղ, որը ջրի տակ առավ ողջ աշխարհը՝ սրբել-տանելով ամեն ինչ: Ընդ որում՝ մեքսիկական Նոյը՝ Կոքս-Կոքսը, իր կնոջ հետ փրկվեց նավով, իսկ ջրերի հետ նահանջելու մեջ համոզվելու համար մի ցին, ապա կոլիբրի արձակեց, որը և բողբոջած մի ճյուղ բերեց:

Ֆիջի կղզիների բնակիչների ավանդությունները բնակություն հաստատելուց անմիջապես հետո դրանք ջրի տակ առնվեցին, և փրկվեցին միայն ութ հոգի, այն էլ՝ երկու նավով: Հնդկաստանում Մանուն ջրհեղեղից փրկվեց նավով, որը նա կառուցել էր ձկան հորդորով:

Հունաստանում Դևկալիոնն ու իր կինը նավով հանգրվանեցին Պառնաս լեռան գագաթին, իսկ Պարսկաստանում՝ Յիման լեռան գագաթին ցանկապատված այգում:

Ամերիկյան շատ ավանդազրույցներում խոսվում է իրենց նախահոր նախազգուշացված լինելու և բացի իր ընտանիքից՝ իր հետ կենդանիներ վերցնելու մասին:

Սուրբգրային պատմումին, սակայն, ամենից մոտը քաղդեականն է, ընդ որում՝ Ք. ա. 4-րդ դարում ապրած Բերոսոսի հայտնած տեղեկություններին երկար ժամանակ պատշաճ ուշադրություն չէին դարձնում՝



կասկածելով, որ հունարեն գրած քուրմը կարող էր օգտված լինել նաև սուրբգրային բնագրերից: Սակայն Ջորջ Սմիթին՝ նշանավոր ասուրագետին, հաջողվեց վերծանել Ասորեստանի արքա Աշուրբանիպալի գրադարանի սալիկներից մեկի՝ թիվ 11-ի պոեմը, որը ջրհեղեղի մասին պատումներ էր պարունակում: «Գիլգամեշ» դյուցազնավեպի հերոսը՝ Ութ-նապիշտիմը, որը շումերական Զիուսուդրան է (տարբերակ՝ Քսիսութրիոս), տեղական մի դիքի հորդորով նավ է կառուցում և իր ընտանիքի անդամների, հարազատների ու մի քանի նավորդների և բոլոր տեսակի կենդանիների հետ փրկվում վերահաս աղետից:

Այսօր արդեն մոռացված, սակայն հին ժամանակներում ջրհեղեղի մասին ավանդազրույցներ հայոց մեջ էլ են տարածված եղել: Քերթողահայր Մ. Խորենացին իր «Հայոց պատմության» սկզբում գրում է. «Բայց ավելի հաճախ Արամյան ազգի ծերերը փանդիռների նվագակցությամբ ցուցքերի և պարերի երգերում հիշատակում են այս բաները»: Ընդ որում՝ լուրջ հիմքեր կան կարծելու, որ Վարդավառի տոնի ժամանակ իրար ջրով ցողելն ու աղավնիներ բաց թողնելը հենց ջրհեղեղի և ջրհեղեղից փրկության հիշատակումն են խորհրդանշում: Գիլգամեշի էպոսի և ջրհեղեղի ավանդության մասին ուրարտական շրջանի Հայաստանում հայտնի լինելն էլ է այսօր փաստ: Արմավիրի (Արգիշտիխինիլի) պեղումներից հայտնաբերված էլամերեն սեպագիր կավե սալիկներում ակնարկներ կան թե՛ ջրհեղեղի աքքադական առասպելի և թե՛ Ութ-նապիշտիմի՝ աքքադական Նոյի՝ անմահության արժանանալու մասին: Ընդ որում՝ ենթադրվում է, որ «Գիլգամեշ» վիպերգության եզրափակիչ դրվագի թեմայով ներկայացում է բեմադրվել արքունիքում՝ ի պատիվ Սարդուր II-ի թագադրման (Ք. ա. 760 թ.):

Արարատ լեռան վրա հանգրվանած նոյյան տապանի մասին բազմաթիվ պատմագիտական վկայություններ կան: Առաջինը պատկանում է քաղդեացի քուրմ Բերոսոսին, որի տեղեկությունների համաձայն՝ իր ժամանակակիցներից ու նախնիներից շատերը բարձրացել են Արարատ և տեսել տապանն ու իրենց հետ, իբրև մասունք, նրանից բեկորներ բերել: Հրեա անվանի պատմագիր Հովսեպոս Փլաբիոսը (1-ին դար) իր «Հրեական հնախոսություն»-ում ասում է, որ «ոմանք [նրա վրայից] պոկելով կուպրի կտորներ են բերում, և մարդիկ դրանք կրում են իրենց վրա իբրև հուռութք»:

Այս մասին հիշատակում են նաև Հիերոնիմոս Եգիպտացին իր «Փյունիկյան հնախոսություն»-ում, Մինեասը և ուրիշներ: Իսկ Նիկողայոս Դամասկացին արդեն իսկ քրիստոնեության տարածման ժամանակներում իր 96-րդ գրքում գրում է. «Մինիաս [երկրից] վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ՝ Բարիս [իմա՝ Արարատ] կոչվող, որտեղ, պատմության համաձայն, շատերն ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը, տապանի վրա տարվելով, իջել է գագաթին, և տախտակների բեկորները երկար ժամանակ պահպանվել են: Սա, հավանաբար, այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը՝ հրեաների օրենսդիրը»:

Ուշագրավ են նաև մերօրյա վկայությունները: 1840 թ. Ստամբուլի թերթերից մեկը հայտարարեց, որ նոյյան տապանը հայտնաբերվել է: Տապանակիր լեռան ձյան ծածկույթն ուսումնասիրելիս թուրքական գիտարշավախումբը սառույցի տակից ելած ահռելի չափերի փայտյա շինվածք է հայտնաբերում: Ընդ որում՝ մերձակա գյուղերի բնակիչների պնդմամբ՝ իրենք արդեն վեց տարի է, ինչ գիտեին այդ մասին, սակայն չէին համարձակվում մոտենալ տապանին, քանզի դռնախորշում ինչ-որ ահեղ ոգի էին տեսել: Տապանի հետազոտությունները ցույց տվեցին, որ բացառությամբ մի նավակողի՝ այն լավ է պահպանված: Ընդ որում՝ ականատեսներից մեկի վկայությամբ՝ տապանը կառուցված է եղել այն ծառից, որն աճում է Եփրատ գետի հովտում: Ներս թափանցելով՝ արշավախմբի անդամները համոզվում են, որ այն նախատեսված է եղել կենդանիների փոխադրման համար, քանզի մեկուսախցերի է բաժանված եղել 4,5 մետր բարձրությամբ: Բացի երեք զետեղարանից՝ մյուսները ծածկված էին սառույցով:

1982 թ. լույս տեսած «Պրավոսլավնայա ժիզն» հանդեսի համարներից մեկում զետեղված մի չափազանց ուշագրավ հոդվածում ևս մի քանի հետաքրքիր վկայություն կա, որ անփոփոխ և ամբողջությամբ ուշադրության ենք ներկայացնում: 1916 թ. օգոստոսին ռուս օդաչու (ավիացիայի սպա) Վլադիմիր Ռոսկովիցկին, թուրքական սահմանի երկայնքով հետախուզական թռիչք իրականացնելով, հայտնվեց Արարատի վրա և ձնե գագաթի արևելյան կողմում սառույցյալ լիճ նկատեց: Լճի եզրամասի մոտ մի մեծ նավի կմախք էր նշմարվում: Թեև նավը մասամբ սառույցի տակ էր, նրա նավակողերը, որոնցից մեկի վրա ծակծկվածքներ կային, դրսում էին մնացել: Բացի այդ՝ երևում էր երկփեղկանի դռան մի փեղկի կեսը: Երբ Ռոսկովիցկին հրամանատարությանը զեկուցեց իր հայտնագործության մասին, վերջինս ցանկացավ այդ տեղեկությունների վերաբերյալ ավելի ստույգ ապացույցներ ստանալ: Լեռան վրա բազմաթիվ թռիչքներ կատարելով՝ նրանք համոզվեցին տեղեկության իսկության մեջ և հաղորդեցին այդ մասին Մոսկվա ու Պետրոգրադ: Նիկոլայ II կայսրը հրամայեց արշավախումբ ուղարկել Արարատ: Այս արշավախումբը չափեց ու լուսանկարեց տապանը. փայտանյութից նմուշներ վերցվեցին, իսկ հետազոտության արդյունքները Պետրոգրադ առաքվեցին: ➥ *էջ 8*

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Յակոբ Պատրիարք Նալեան. Քրիստոնէական ուսմանելի

Սկիզբը՝ թիւ 9–18

ԳԼՈՒԽ Դ

Ինը երանութիւններուն մասին, որ Քրիստոս հաւատացեալներուն տուաւ

Առաջին հարցում. իմացա՛ր, թէ մարդ եօթը առաքինութիւններուն եւ Սուրբ Հոգիի եօթը պարգեւներուն միջոցով՝ որով առաքինութիւնները կը զօրանան, ի վերջոյ կը հասնի երանութեան, որ բոլոր բաղձանքներուն լրումն է. որովհետեւ երանութիւնը կատարեալ առաքինութիւն է եւ պարգեւներու կատարեալ գործը

Արդարեւ, գիտցի՛ր, որ առաքինիներուն եւ հաւատացեալներուն դասերն ինն են:

Նախ՝ կան ոմանք, որոնք ընդհանրապէս մեղքերէ զուրկ են, ու ասոնք հոգիով աղքատներ կը կոչուին:

Երկրորդ՝ կան ոմանք, որոնք ընդհանրապէս անվնաս են՝ գառնուկներու նման, որոնք եղջիւր չունին՝ զարնելու, ատամներ չունին՝ խածնելու, ճանկ չունին՝ պատառելու. այլ՝ մաքուր եւ անմեղ են. ասոնք հեզ ու խոնարհ կը կոչուին:

Երրորդ՝ կան ոմանք, որոնք պահ մը զԱստուած բարկացուցին իրենց մեղքերով, եւ կան որոնք, աշխարհի վրայ որպէս որդեմեռ լալով ու ողբալով, օտարի նման խեղճ եւ համր են աշխարհի վրայ ու հեռու են Արքայութենէն. ասոնք սգաւորներ կը կոչուին:

Չորրորդ՝ կան ոմանք, որոնք սաստիկ սիրով զմայլած են Աստուծմով եւ կ՚ուզեն, որ իրենց սիրած Աստուծոյն անունը աշխարհի վրայ տարածուի. ասոնք արդարութեան քաղց ունեցողներ կը կոչուին:

Հինգերորդ՝ կան ոմանք, որոնք հոգիով ու միտքով խեղճերը կը խնամեն. երկրաւորներով երկնաւորը կը շահին. ասոնք ողորմած կը կոչուին:

Վեցերորդ՝ կան ոմանք, որոնք իրենց սիրտը մեղքերու պղծութենէն սրբած ու մաքրած են եւ արեւու նման պայծառացած են այնքան, որ արժանի պիտի ըլլան աստուածտեսութեան. ասոնք սիրտով մաքուրներ կը կոչուին:

Եօթներորդ՝ կան ոմանք, որոնք Աստուծոյ եւ իրենց ընկերներուն հետ խաղաղ [հաշտ] կ՚ապրին, կռուողները կը հաշտեցնեն՝ Աստուծոյ Որդիին նման. ասոնք խաղաղարարներ կը կոչուին:

Ութերորդ՝ կան ոմանք, որոնք մնայուն կերպով անօրէն մարդոց կողմէ կը հալածուին, սակայն կը համբերեն (կը տոկան) այդ հալածանքներուն. ասոնք արդարութեան ու իրենց ճշմարտախօսութեան համար հալածուողներ կը կոչուին:

Իններորդ՝ առաքեալներուն դասերը կային, որոնք արդարութեան համար պիտի հալածուէին, ճշմարտութեան համար պիտի նախատուէին, անարդար կերպով պիտի զրպարտուէին, սակայն վերջաւորութեան Արքայութեան արժանի պիտի ըլլային: Այդ պատճառով, Քրիստոս ամէնէն վերջը անոնց երանի տուաւ, որպէսզի երանութեան յոյսով հալածանքներուն եւ տեսակ-տեսակ նեղութիւններուն համբերէին, ինչպէս նաեւ երանութեան սիրով մնայուն կերպով բարութիւն ընէին մարդոց հոգիներու փրկութեան համար:

Արդարեւ, ի՞նչ է երանութիւնը եւ քանի՞ կերպ ունի:

Այսպէս իմացիր, թէ երանութիւնը բոլոր բարիքներու պարունակումն է, ինչպէս որ թշուառութիւնը բոլոր չարիքներու պարունակումն է: Որպէս թէ ըսեմ, պարսպապատ պարտէզ մը կայ, որու մէջ ամէն տեսակի ծառեր ու ծաղիկներ կան, ինչպէս Ադամի դրախտին մէջ. այսպէս ալ երանութիւնն ամէն տեսակի բարութիւններու պարունակումն է եւ փափաքներու իրականացնողը. մարդ մը եթէ երանութեան արժանանայ, այլեւս ո՛չ մէկ բանի կարօտ չի մնար. իսկ այս երանութիւնը Աստուծոյ տեսութիւնն է, որովհետեւ Անոր տեսութեան մէջ բոլոր բարիքները կան:

Երանութիւնը երկու տեսակի է. այս կեանքի ճամբայինը եւ Վերի Գաւառինը:

Այս կեանքի երանութիւնը՝ աշխարհի վրայ կատարեալ առաքինութեամբ կենցաղավարելն է, որ մարդուն ձեռքէն կը բռնէ ու Վերին Գաւառին կատարեալ երանութեան կը բարձրացնէ, որ է՝ դէմ յանդիման Աստուծոյ տեսութիւնը, այսինքն՝ երես առ երես:

Եթէ երանութեան ցանկաս, դուն միշտ առաքինի՛ եղիր. որպէսզի դառն աշխարհէն ազատիս, երկինքին մէջ մնաս դուն անվիշտ:

Երկրորդ հարցում. առաջին երանութեան մասին, որ է հոգիով աղքատութիւնը

Հոգեւոր աղքատութիւն է յանուն աշխարհի Աստուծոյ սէրէն հրաժարիլը, որովհետեւ ով որ աշխարհը կը սիրէ, Աստուծոյ սէրէն հեռու է, իսկ ով որ մարմինի եւ աշխարհի սիրով ծանրաբեռնուած է, անոր հոգիին մէջ դատարակ ու պարապ տեղ չկայ, որ Աստուծոյ սէրը լեցուի: Այդ պատճառով Քրիստոս նախ հոգիով աղքատներուն երանութիւն տուաւ, այսինքն՝ խոնարհներուն, քանի որ անոնց հոգին դատարկ է աշխարհի սէրէն ու կրնայ իր մէջ ամբարել բոլոր առաքինութիւններն ու սրբութիւնները: Այս աղքատութիւնը երեք բան կը խնդրէ.

Նախ՝ աշխարհի սէրէն ու հեշտասիրութենէն հրաժարիլ:

Երկրորդ՝ աշխարհի փարթամութիւնն ու հարստութիւնը կամաւորաբար արհամարհել:

Երրորդ՝ մեծութեան եւ իշխանութեան չցանկալ, որովհետեւ հոգիով աղքատներն անոնք են, որոնք ոչինչ ունին եւ ամէն ինչ ունին, որ է Աստուած:

Հոգիով աղքատ անոր կ՚ըսեմ, ով մեղքերէ զուրկ է. Աստուծմէ զատ՝ ոչինչ ունի եւ լեցուած է շնորհքներով:

Երրորդ հարցում. երկրորդ երանութեան մասին, որ է հեզութիւնը

Հեզութիւնը համեստ հոգիին հանգստութիւնն է, որ ամբոխական դիպուածներով չի շարժիր, որովհետեւ ով որ հեզ է, աշխարհի յաջողութիւնն ու անյաջողութիւնը նոյն կերպով կը տանի, ինչպէս երբ գառնուկի մը վրայ փուշ մը կամ վարդ մը բեռնաս, երկուքն ալ նոյն կերպով կը տանի: Այսպէս է մարդը՝ հեզ եւ խոնարհ. այդ պատճառով ալ անոյշ հոգի կ՚ըսուի հեզ մարդուն, որ համեստ ու ամօթխած է: Այսպիսի մարդն աշխարհի տաղտուկէն ու աղմուկէն չի՛ շարժիր, ինչպէս ծովը հողմերէն. այլ՝ հրեղէն երկինքին նման է, որ միշտ անշարժ է, ուր Աստուած կը բնակի: Հեզ ու խոնարհ մարդն ալ Երկինքի նմանութեամբ Աստուծոյ բնակարան է, ինչպէս մարգարէութեան մէջ ըսաւ, թէ ես որո՞ւ մէջ կը բնակիմ, եթէ ոչ հեզերուն ու խոնարհներուն: Դարձեալ՝ հեզ մարդը այնպիսի անոյշ հոգի է, որ ո՛չ մէկ դառնութիւն կրնայ զինք լեղի ընել, այլ՝ լեղին կ՚անուշցնէ, չարը բարիի կը դարձնէ, չի՛ վնասեր ու չի՛ վնասուիր, այլ՝ ուրիշներուն ըրած չարութիւնը համբերութեամբ կը տանի: Մեծին կը հնազանդի, հաւասարին կը սիրէ, պզտիկին ալ կը խոնարհի: Այսպէս ընելով, առանց գնելու ու յոգնելու, ամբողջ աշխարհը կը վայելէ, քանի որ հեզ մարդուն համար ամբողջ աշխարհն ընտանի է, իսկ հայրենի գաւառը պանդխտութիւն եւ օտարութիւն: Հեզութեամբ աշխարհը կը վայելէ այնքան ատեն, որ ողջ է, իսկ մահանալէ ետք ողջերուն երկիրը՝ Վերին Երուսաղէմը կը վայելէ:

Եթէ հեզ եղար, ո՛վ դուն խոնարհ, ամբողջ աշխարհը քեզի ծառայ կ՚ըլլայ:

Եթէ լիրբ ու անզգամ եղար, Երկինքին մէջ քեզի բաժին չկայ:

Չորրորդ հարցում. երրորդ երանութեան մասին, որ է սգաւորութիւնը

Սուգը շնորհ մըն սաստիկ ցաւելու՝ պատահած չարիքի մը եւ կամ նուազած բարիքի մը համար, որովհետեւ եթէ մէկը զԱստուած կը կորսնցնէ մեղքի ու հեշտասիրութեան պատճառով, պէտք է ցաւելով ու լալով վերագտնէ: Հաճոյքով, քէֆով կորսնցուցած բարին, պէտք է տառապանքով, վիշտով վերագտնէ: Մեղուն երբ իր ծագերը կը կորսնցնէ, ցեխոտ տեղ ու ծաղիկներու մէջ կ՚երթայ եւ կը փնտռէ: Դուն զԱստուած մեղքերով կորսնցուցիր, սրբութեամբ եւ լալով պիտի գտնես: Սակայն կայ աշխարհի սուգ, եւ կայ երանելի սուգ: Ով որ մարմնաւոր պակասութիւններու եւ հեշտութեան համար կը սգայ, իր հոգիին համար մահ կը բերէ. իսկ ով որ բարիի պակասութեան եւ պատահած չարութեան համար կը սգայ, կեանք կը բերէ իր հոգիին եւ Երկինքի մէջ Աստուծոյ տեսութեամբ կ՚ուրախանայ: Ինչպէս Քրիստոս ըսաւ. երանի՛ անոնց, որոնք հիմա կու լան, որովհետեւ պիտի խնդան: Պետրոս առաքեալը լացաւ՝ մեղքը քաւուեցաւ. Մարիամ Մագդաղենացին լացաւ, Քրիստոսի ոտքերը լուաց իր արցունքներով, թողութիւն գտաւ: Մեր օրերուն, սակայն, ո՞ւր են իրենց մեղքերուն վրայ լացողներ, այլ՝ բոլորն ալ ծիծաղելով չարիք կը գործեն: Երբ ոսկի կամ արծաթ կորսնցնեն, կու լան, զԱստուած երբ կորսնցնեն, կը խնդան. աւա՜ղ, հազար աւա՜ղ այդ խնդալուն, որ յաւիտեան կը լացնէ:

Իմացի՛ր, ո՛վ խեղճ ու լալի, թէ ինչ կը կորսնցնես. զԱստուած կը կորսնցնես, որ հոգիիդ հոգին է. հոգիդ կը կորսնցնես, որ մարմինիդ կեանքն է. ասոնք, որ կը կորսնցնես, զո՞վ պիտի գտնես, եթէ ոչ դժոխքն ու սատանան:

Ո՜վ մեղաւոր, հոգիիդ համար լա՛ց, որ խնդալով կորսնցուցիր, խնդա՛յ, արդար, որ Աստուծմով մեղքերէ հեռու ես:

Հինգերորդ հարցում. չորրորդ երանութեան մասին, որ է արդարութեան քաղց ունենալը

Արդարութեան քաղցը միշտ սիրով զմայլիլն է առաքինութեան, սրբութեան, ուղղութեան, ճշմարտութեան, իմաստութեան եւ այլ բարի գործերով: Որովհետեւ, ով որ ճշմարիտ բարին կը սիրէ, ճաշակելով չի՛ յագենար ու զովանար, այլ մնայուն կերպով անօթի ու ծարաւ է: Այդ պատճառով վարդապետները կ՚ըսեն, թէ արդարութեան քաղցը արդարութեան տենչումն է եւ կամ ծայրագոյն Բարիին, որ է Աստուած, քանի որ Աստուծոյ մէկ անունը Արդար է: Արդ, ով արդարութեան քաղց կ՚ունենայ, արդէն իսկ զմայլած է Աստուծոյ սիրով, կը ճաշակէ, սակայն տակաւին անօթի է:

Դարձեալ՝ մարդ այս կեանքին մէջ արդարութեան քաղց կ՚ունենայ (այսինքն՝ Աստուծոյ), որովհետեւ իր փափաքածը վարագոյրի ու հայելիի տակ կը տեսնէ. իսկ հանդերձեալին մէջ կը յագենայ իր փափաքածով՝ զԱստուած դէմ յանդիման տեսնելով:

Տակաւին, արդարութեան յատուկ է իւրաքանչիւրին իր արժանիքին համաձայն հատուցել, բարիներուն՝ բարի, չարերուն՝ չար: Արդ, ով արդարութեան քաղցը ունի, միշտ կը կամենայ թէ՛ աշխարհի վրայ եւ թէ՛ հանդերձեալ կեանքին մէջ բարիները բարիով պսակուին, իսկ չարերը ըստ արժանւոյն պատժուին: Այսպէս՝ Դաւիթը, որ արդարութեան քաղցն ու ծարաւն ունէր, ամէն առտու մեղաւորները կը սպաննէր, իսկ բարի մարդոց՝ օղակի նման պարիսպ ու հովանի էր:

Ինչքան ալ աշխարհի վրայ զԱստուած ճաշակես, անօթի կը մնաս, իսկ եթէ Երկինքի մէջ Անոր երեսը տեսնես, փափաքդ այն ատեն կը յագենայ:

Վեցերորդ հարցում. հինգերորդ երանութեան մասին, որ ողորմածութիւնն է

Ողորմութիւնն է, որ երկրաւորներով երկնաւոր բաներ կը շահուին. ժամանակաւորներով՝ յաւիտենականները, ապականելիներով՝ անապակելիները: Որովհետեւ ինչպէս մարդն իրմէ մեծ եղողի մը ողորմութեան կարօտ է, այսինքն՝ Աստուծոյ, այդպէս ալ աղքատներն ու չքաւորները Աստուած ունեւորներու ողորմութեան կարօտ ըրած է, որպէսզի անոնց աղտով իրենց հոգին լուան, անոնց վէրքերով իրենց հոգիին վէրքերը բժշկեն եւ անոնց աղքատութեամբ իրենք փարթամանան, քանի որ աղքատները գանձապետեր են եւ Արքայութեան բանալի, Քրիստոսի փոխանորդ եւ Երկինքի Արքայութեան պահապան: Տո՛ւր չքաւորներուն եւ առ առատաձեռն Թագաւորէն՝ Քրիստոսէ:

Սակայն, իմացի՛ր, թէ ողորմութիւնը երկու կերպ ունի. հոգեւոր եւ մարմնաւոր:

Հոգեւոր ողորմութիւնը իր հերթին եօթ տեսակի է:

Առաջին՝ յանցաւորին յանցանքը ներել:

Երկրորդ՝ յանդիմանել մեղաւորը:

Երրորդ՝ ուսուցանել տգէտները:

Չորրորդ՝ խրատել երկմիտները:

Հինգերորդ՝ մխիթարել տրտմածները:

Վեցերորդ՝ աղօթել ընկերոջ փրկութեան համար:

Եօթներորդ՝ համբերել իր դէմ եղած անիրաւութիւններուն:

Մարմնաւոր ողորմութիւնն ալ եօթ տեսակի է:

Առաջին՝ կերակրել անօթիները:

Երկրորդ՝ խմցնել ծարաւները:

Երրորդ՝ հագցնել մերկերը:

Չորրորդ՝ հաւաքել (հիւրասիրել) օտարները:

Հինգերորդ՝ փրկել գերիները:

Վեցերորդ՝ այցելել հիւանդները:

Եօթներորդ՝ թաղել մեռեալները:

Եթէ կը կամենաս Աստուծմէ ողորմութիւն գտնել, Անոր անուամբ անխնայ տուր եւ ո՛չ մէկէն խնայէ:

Եօթներորդ հարցում. վեցերորդ երանութեան մասին, որ սիրտի սրբութիւնն է

Սիրտի սրբութիւնը մեղքերու բոլոր աղտեղութենէն մաքրուիլն ու յաւիտենական պայծառ լոյսին թագաւորելն է, որովհետեւ ինչպէս աղտոտ հայելին մարդուն պատկերը չի՛ կրնար ցոյց տալ, այդպէս ալ աղտոտ եւ մեղքերով լեցուն հոգին չի՛ կրնար զԱստուած տեսնել: Սիրտով սուրբերը ծովուն կը նմանին, որ երբեք աղտոտութիւն չընդունիր, այլ՝ եզերք կը հանէ, կը նետէ աղտոտութիւնները: Կը նմանին ոսկիի, որ դարձեալ աղտոտութիւն չընդունիր:

Տակաւին, Երկինքի Արքայութեան կը նմանի, ուր մաքուր եւ արդար մարդիկն ու հրեշտակները կը բնակին. այդպէս ալ, սուրբ սիրտին մէջ Աստուած ու բարի խորհուրդները կը բնակին:

Դարձեալ՝ մաքուր սիրտ ունեցողները եդեմական դրախտին կը նմանին, որ մեղքերով մեռածները՝ Ադամն ու Եւան դուրս հանեց: Այդպէս ալ, սիրտով մաքուրները թոյլ չեն տար որ չար խորհուրդները ներս մտնեն, այլ՝ Աստուծոյ շնորհքով կ՚արտաքսեն: Դարձեալ՝ Մովսէսի տապանակին կը նմանին, որու մէջն ու դուրսը մաքուր ոսկիով պատուած էր: Կը նմանին դարձեալ քաւութեան, որ տապանակին վրայ կար, որու մէջ Աստուած կը բնակէր: Այսպէս ալ սուրբ սիրտին ու հոգիին մէջ Աստուած կը բնակի՝ իբրեւ Իր աթոռին: Հետեւաբար սուրբերուն սիրտը Աստուծոյ համար մաքուր անկողին է: Աստուած հպարտին սիրտին մէջ չի՛ հանգչիր՝ գոռոզութեամբ լեցուն ըլլալուն պատճառով, ո՛չ ալ՝ բղջախոհին սիրտին մէջ՝ տիղմով լեցուն ըլլալուն պատճառով, այլ՝ առաքինիի սիրտին մէջ՝ ծաղկալից ըլլալուն պատճառով: ➥ *էջ 8*

Համաշխարհային ջրհեղեղը

← էջ 6

Ցավոք, այս արժեքավոր փաստաթղթերի հավաքածուն ոչնչացվեց Ռուսաստանում՝ հավանաբար բոլշևիկյան հեղափոխության ժամանակ: Ռոսկովիցկու հետ կապված պատմությունը հայտնի դարձավ Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ: Ըստ խորհրդային հատուկ ծառայությունների ղեկավար Յասպեր Մասկալինի՝ նրա ենթականերից մեկը, հետաքրքրասիրությունից դրդված, թռիչք կատարեց Արարատի վրայով՝ տեսնելու՝ արդյո՞ք Ռոսկովիցկու պնդումների մեջ ճշմարտության թեկուզ ինչ-որ նշույլ կա: Խորհրդային օդաչուն ևս ուշադրություն դարձրեց մի ինչ-որ շինվածքի վրա, որի մի մասը սառցե լճի մեջ էր մխրճված: Այդուհանդերձ՝ այս փաստերը խորհրդային գիտնականներին չխանգարեցին հայտարարել, որ նոյյան տապանի պատմությունը գիտության հետ որևէ ընդհանրություն չունեցող առասպել է:

1955 թ. հուլիսի 6-ին լեռնագնաց Ֆեռնան Նավառան իր տասնմեկամյա որդու՝ Ռաֆայելի հետ ինչ-որ բան հայտնաբերեց, որն ըստ նրա՝ նոյյան տապանն էր: Նա իր գյուտով գրավեց համայն աշխարհի ուշադրությունը: Նավառայի այս գիտարշավի նախապատրաստությունը տասնյոթ տարի էր տևել: Այն հանգամանքը, որ Արարատ լեռը գտնվում էր երեք երկրների՝ Խորհրդային Միության, Իրանի և Թուրքիայի սահմանագլխին, և որ նրանց միջև լեռ բարձրանալն արգելող գաղտնի պայմանագիր էր ստորագրված, հետազոտողի համար լուրջ խոչընդոտ դարձավ: Նավառան երեք փորձ իրականացրեց՝ գիշերներով անցնելով վտանգավոր գոտին: Ահա թե ինչպես ընթացավ հաջողությամբ պսակված երրորդ գիտարշավը: Հետևելով իր հայ ընկերոջ ցուցումներին՝ Նավառան գիշերով հասավ սառցադաշտի եզրին և գիշերելու համար վրան խփեց՝ առավոտյան վերելքը շարունակելու մտադրությամբ. այն պետք է անցներ ամբողջովին սառցակալած անառիկ ժայռերով: Գիշերը սարսափելի բուք ու բորան սկսվեց, որի հետևանքով ամեն ինչ սառցի հոծ կեղևով ծածկվեց: Նավառան ու Ռաֆայելը քիչ էր մնում ցրտահարվեին, քանզի հայտնվել էին ձյան հաստ շերտի տակ՝ զրոյից 30 աստիճան ցածր ջերմաստիճանի պայմաններում: Առավոտյան, ինչպես պատմում է Նավառան, նրան Աստծու օգնությամբ հաջողվեց ճանապարհ ընկնել դեպի այն տեղը, որը հեռվից էր նկատել իր առաջին գիտարշավներից մեկի ընթացքում: Թեև ժամանակն անհաջող էր ընտրել, ամեն ինչ ձյան ու սառույցի տակ էր, այնուամենայնիվ նրան հաջողվեց հասնել նպատակին: Մեծագույն դժվարությամբ, վտանգի ենթարկվելով, նա սառցի տակ առնված նավակողի չորսուից մի կտոր պոկեց՝ մեկ մետր երկարությամբ և 8 սմ հաստությամբ: Այդ մասում հղկված տախտակներ չկային: Իսկ վերադարձին սահմանապահները գնդակոծեցին և ձերբակալեցին Նավառային: Վերջի վերջո նրան ազատ արձակեցին՝ վերադարձնելով լուսանկարչական բոլոր ժապավեններն ու փայտի նմուշը: Ահա թե ինչպիսի պայմաններում էր անցնում գիտարշավը: Կահիրեի և Մադրիդի աշխատանոցներում կատարված՝ փայտանյութի ռադիոածխածնային տարրալուծումը ցույց տվեց, որ այն հինգ հազար տարվա է: Ֆրանսերեն հրատարակված Նավառայի գիրքը նկարազարդ է, որի վրա երևում է, թե ինչպես է հեղինակը տապանի նավակողից մի կտոր փայտ պոկում, ինչպես նաև այն տեղը, որտեղ սառցի տակ անթեղված է տապանը. այստեղ ներկայացված են նաև աշխատանոցային տարրալուծումների արդյունքներ, նկարներ, սխեմաներ և այլն:

1965 թ. «Դեյլի տելեգրաֆ»-ում տպագրվեցին տիեզերքից նկարահանված, հստակ ուրվագծերով երևացող տապանի լուսանկարները: Սակայն թուրքական կառավարությունը յոթանասունական թվականներից մահմեդական աշխարհի ճնշման տակ (քանզի, ըստ Ղուրանի, տապանն ուրիշ լեռան վրա է հանգրվանել) խոչընդոտում է ցանկացած գիտարշավ: Ինչ վերաբերում է տապանին, ապա Ս. Գիրքը նրա չափ ու ձևի մասին վկայում է. «Արդ, դու քեզ համար քառակուսի փայտից տապան կշինես: Տապանը բաժանմունքներով կպատրաստես և ներսից ու դրսից կուպրով կծեփես: Տապանն այսպես կկառուցես. թող երեք հարյուր կանգուն լինի տապանի երկարությունը, հիսուն կանգուն՝ լայնությունը, և երեսուն կանգուն՝ բարձրությունը» (Ծննդ. Զ 14): Կանգունը մետրերի վերածելով՝ ստանում ենք հետևյալ պատկերը. երկարություն՝ 150, լայնություն՝ 25, բարձրություն՝ 15:

Չափազանց հետաքրքրական է, որ երկարության և լայնության հարաբերակցությունը վեցը մեկի է, ինչն ապահովում էր տապանի առավելագույն շարժումը քամուց և հոսանքներից տարվելիս: Իսկ բարձրության և լայնության հարաբերակցությունը տապանին այնպիսի կայունություն էր ապահովում, որը բացառում էր ծովային օրորում ջրերի ցանկացած ալեկոծման դեպքում:

Եռատախտակամած նավի ընդհանուր մակերեսը 9300 քառակուսի մետր է, որը համարժեք է 569 բեռնատար վագոնի: Իսկ կարո՞ղ էր, արդյոք, այսպիսի նավն ընդունել աշխարհի մեկ միլիոնից ավելի կենդանի օրգանիզմների: Այս մեծաքանակ կենդանական աշխարհից միայն 35 000-ն են ցամաքային և զբաղեցնում էին տապանի ընդամենը քառորդ մասը՝ բավական մեծ տեղ թողնելով կերի պաշարների և ութիոգանոց անձնակազմի համար: Այս գիտական ուսումնասիրությունները լավագույնս ապացուցում են, որ տապանի չափսերը և ծավալը մտացածին չեն, այլ ընդունված են ըստ գիտության կանոններին համապատասխանող հաշվարկի:

Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ

Աստվածաշունչ՝ գիրք գրոց



ՆՈՅ

Նոյը կատարեալ եւ արդար մարդ էր իր ազգի մէջ: Նոյը սիրելի եղաւ Աստծուն: Նոյը ծնեց երեք որդի. Սէմին, Քամին, Յաբէթին: Ապականուեց երկիրն Աստծու առաջ, աշխարհը լցուեց անարդարութեամբ: Տէր Աստուած տեսաւ, որ երկիրն ապականուած է, որովհետև երկրի վրայ ամէն էակ ապականել էր իր ճանապարհը: Տէր Աստուած ասաց Նոյին. «Բոլոր մարդկանց վերջը հասել է, որովհետև երկիրը լցուել է նրանց անիրաւութիւններով: Ես կ'ոչնչացնեմ նրանց ու երկիրը: Արդ, դու քեզ համար քառակուսի փայտից տապան կը շինես....»:

Գիրք ծննդոց

ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՅԵՄԲԵՐ

† Սրբոց հրեշտակապետացն՝ Գաբրիէլի, Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն — *11 Նոյեմբերի*

† Բարեկենդան Յիսնակաց պահոց — *19 Նոյեմբերի*

† Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն — *21 Նոյեմբերի*

Յակոբ Պատրիարք Նալեան. Քրիստոնէական ուսանելի

← էջ 7

Սիրտով մաքուրը ջինջ ու մաքուր հայելի է, զԱստուած տեսնելու արժանի կ'ըլլայ:

Ութերորդ հարցում. եօթներորդ երանութեան մասին, որ խաղաղարարութիւնն է

Խաղաղարարութիւնն առաքինութեան կայացումն է, որ մարդս դէպի Աստուած կը տանի առանց մարմինի, աշխարհի ու սատանայի հակառակութեան: Արդ, առաքինութեան կայացում այն պատճառով կ'ըսուի, քանի որ յուզուած ու խռոված միտքը բարութեան գործերուն եւ առաքինութեան մէջ հաստատուն չէ. որովհետեւ ինչպէս ալեկոծութեան ժամանակ փրփրած ծովը մարդուն պատկերը ցոյց չի՛ տար, այդպէս ալ խռոված եւ ալէկոծած միտքը առաքինութեան պատկերը ինքն իր վրայ ցոյց չի՛ տար: Մարդուն դէպի Աստուած կը տանի, կ'ըսուի, որովհետեւ Աստուծոյ տեղն ու բնակութիւնը խաղաղ միտքն է: Ով խաղաղ միտք ունենայ, աշխարհի բոլոր տաղտուկները մէկ կողմ կը ձգէ ու Աստուծմով կը զմայլի: Մովսէս մարգարէն իրարանցումէ ու տաղտուկէ հեռացաւ դէպի Սինա լեռ եւ զԱստուած տեսաւ. քառասուն օր առանց հացի եւ ջուրի՝ Աստուծմով զմայլեցաւ: Եղիա մարգարէն ալ անոր նման Քորեբ լեռ առանձնացաւ, զԱստուած տեսաւ մեղմ եւ կակուղ հողմի մէջը:

Քրիստոս, Պետրոսը, Յովհաննէսը եւ Յակոբոսը տաղտուկէն հեռացուց դէպի Թափոր լեռ, ապա Իր քաղցր ու անոյշ փառքը ցոյց տուաւ անոնց եւ զմայլեցուց զանոնք Իր Աստուածութեան լոյսով: Այս խաղաղութիւնը այն ժամանակ կարելի կ'ըլլայ վայելել, երբ աշխարհի, մարմինի ու սատանայի կամքը կը ձգենք ու Աստուծոյ հետ կը հաշտուինք, ինչպէս նաեւ ուրիշներու ալ հաշտութեան պատճառ կը դառնանք: Այս բոլորին վարձքը Աստուծոյ որդի կոչուիլն է:

Քրիստոս մեր եւ Աստուծոյ միջեւ իբրեւ Միջնորդ մտաւ, որպէսզի երկու անհաշտ թշնամիները հաշտեցնէ: Տակաւին, եթէ մէկը երկու թշնամիներու միջեւ մտնէ, երկու կողմէ ալ կը վիրաւորուի ու հարուածներով կը լեցուի: Այդպէս ալ Քրիստոս՝ մեր Աստուածը, մեղքերէն ու Հօր արդարութենէն գանակոծուեցաւ ու մինչեւ մահ խոցուեցաւ:

Տես, թէ ատելութիւնը, խռովութիւնն ու մեղքը ինչքա՜ն կը նեղէին զԱստուած, որ Հայրն Աստուած Իր Որդին մահուան մատնեց: Լաւ է, որ ես Իմ Որդիս չխնայեմ, մեղքը վերցուի աշխարհէն, քան թէ խնայեմ, եւ մեղքը Ինծի հակառակ կանգնի: Այդպէս ալ Աստուծոյ Որդին լաւ համարեց մեռնիլ՝ խռովութիւնը վերցնելու համար, կարծես թէ ըսել ուզէր՝ լաւ է, որ ես կեանքս կորսնցնեմ, քան թէ խռովութիւն տեսնեմ Աստուծոյ եւ մարդոց միջեւ: Արդարեւ, տես եւ մտածէ, թէ խաղաղութիւնը ինչքան դժուարութեամբ գտնուած է՝ խաչով, չարչարանքով ու մահով. իսկ դուն խաղաղութիւնը զուր տեղ հողմով կը քակես:

Քրիստոս խաղաղութեան գինն է՝ Իր չարչարանքով ու արիւնով, ով որ խաղաղութիւնը կը քակէ, Անոր արիւնը անարդիւնք կը դարձնէ:

Իններորդ հարցում. ութերորդ երանութեան մասին, որ արդարութեան համար հալածուիլն է

Արդարութեան համար հալածուիլը ճշմարիտ հաւատքի սիրոյն ամէն տեսակի չարչարանքներու եւ նեղութիւններու համբերելն է: Որովհետեւ Քրիստոս ճշմարտութեան մասին վկայելու համար աշխարհ եկաւ, հալածուեցաւ ու խաչուեցաւ ճշմարտութիւնը խօսելուն պատճառով:

Սոյնպէս բոլոր մարգարէները, առաքեալները, մարտիրոսներն ու սուրբ հայրապետները ճշմարտութեան մասին իրենց տուած վկայութեան պատճառով քարկոծուեցան, սղոցուեցան ու աքսորուեցան: Օրինակ՝ Յովհաննէս աւետարանիչը, որ Պաթմոս կղզի աքսորուեցաւ, ճշմարիտ հաւատքի մասին իր տուած վկայութեան պատճառով: Սուրբ Յովհան Ոսկեբերանը նաեւ արդարութեան համար հայոց աշխարհը՝ Կոկիսոն աքսորուեցաւ:

Սուրբ Աթանասը, Ներսէս Մեծն ու Սուրբ Իսահակ Հայրապետը ճշմարտութեան համար աքսորուեցան. համբերեցին չարչարանքներուն եւ իրենց երեսը ճշմարտութենէն չթեքեցին: Սակայն հազար ափսոս. այս երանելիները չարչարանքներու մէջ իսկ վկայութիւն տուին ճշմարտութեան մասին, մինչ ներկայ ժամանակներուն թուլամորթները քէֆի ու հաճոյքի համար ճշմարտութիւնը կը լքեն, հակառակ անոր, որ զիրենք ո՛չ չարչարող եւ ո՛չ ալ նեղող կայ:

Այդ սուրբերը ինչո՞ւ համար այդքան չարչարանքներու կը համբերէին, եթէ ոչ Արքայութեան համար: Այդ պատճառով Քրիստոս ըսաւ. անո՛նց է Երկինքի Արքայութիւնը, իբրեւ հայրենական ժառանգութիւն:

Ո՜վ քրիստոնեայ, մինչեւ մահ արդարութեան համար մարտնչիր, որպէսզի ապահովաբար ժառանգես անմահ Արքայութիւնը:

1806

Շարունակելի

Փոխադրութիւնը՝ Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ **krishayas.wordpress.com** **etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan**
Ստոր. տպագր. 27.03.2024 թ.
Տպաքանակը՝ 1265